




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԼՈՐԳԾԱՌԱՅ ՅՈՒՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍԱՆԵԼԻ
ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱ-
ԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

Բաւեջան Կենտրոնական Նպաստամասոյց Յանձնաժո-
ղովոյ Տփլիսայ, ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական:

Ի յայտարարութեանց եւ ի տեղեկագրոց Նպաստամասոյց
Յանձնաժողովոյ՞ զօրութեամբ իրազեկ եղաք, զի յետ հաս-
տատման իւրոյ ի 14-ն փետրվարի 1905 ամի, թ. 134 Հայ-
րապետական կոնդակաւ օրհնութեան ու քաջալերական
բանիւ երջանակայիշատակ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսի,
Յանձնաժողովոյ՞ յամենայն կողմանց յազգայնոց եւ ի հաստա-
տութեանց մերոց ընկալեալ զ454,041 ու. 64 կ. կամաւոր
նուէրս վասն խնամելոյ զարկածեալս եւ զթշուառացեալս
ի ժամ ընդհարմանց մահմեդականաց եւ հայոց Կովկասու
ի 1905 եւ 1906 ամս, փրկեալ է զբազումս ի տառապանաց
եւ ի կորստենէ:

Դժուարին է Մեզ յուշ ածել առանց հոգեկան վրդովմանց և տանջանաց զսոսկալի վիճակ երկուց դարաւոր դրացի ազգաց, նամանաւանդ զաղէտալի վախճան հոգեւոր դաւակաց Մերոց և զտնտեսական քայքայումն բազմաց։ Սակայն միխթարութեամբ հոգւոյ յիշեմք զմարդասէր և զգործովալի զգացմունս հայ ժողովրդեան և զբարոյական կորով նորա ի ժամ ազգային աղէտից մերոց, որպէս և յայսմ նուագի։

Միխթարութեամբ և երախտագիտութեամբ պարտ է յիշել նաև զգործունէութիւն Նպաստամատոյց Յանձնաժողովոյդ, որ անձնուիրաբար և ամենայն արիաջանութեամբ կատարէր, օժանդակութեամբ տեղական մարմնոց, զբարոյական պարտիս իւր, հասանելով յօգնութիւն թշուառաց, ամօքելով զվիշտս և զտառապանս բազմաց, խնամելով զորքս և զայրիս հայոց։

Աւարտելով զգործունէութիւն իւր, Յանձնաժողովդ մատոյց ի 1910 ամի զհաշիւս և զտեղեկագիր իւր հոգելոյս նախորդին Մերում Տ. Տ. Մատթէոս Կաթողիկոսի և ապա ի լոյս էած գայնս ի գիտութիւն հայ ժողովրդեան, իսկ զյաւելեալ 75,000 ռուբլիս եղ յ2-ն օգոստոսի 1911 ամի ընդ տոկոսեօք յԱզօզ-Դօնեան զբամատուն։

Ապա, անսալով բանից և յորդորանաց Մերոց, ի հետեւումն Հայրապետական կոնգակիս յ12 սեպտեմբերի անցելոյ 1913 ամի ընդ համարաւ 1346, Յանձնաժողովդ ի գումարման իւրում ի 1-ն դեկտեմբերի որոշեաց փոխադրել զամբողջ գումարն ի ս. Էջմիածին յանուն Մեր։ Զկնի որոյ գնելով զարժեթուղթս Վարկային Լնկ. Տփիսի քաղաքի 94,600 ռ. անուանական արժողութեամբ, վճարեալ է 80,086 ռուբլի 14 կ., և եղեալ գայնս ի պահ յԱռևտրական Դրամատան, զվկայական զբամատանն ընդ համարաւ 5166 առաքեաց առ Մեզ, զոր ընկալաք ընդ գրութեան Յանձնաժողովոյդ, յատուկ յայտաբարութեամբ գերապատիւ առաջնորդիթեմիդ յ17 փետրվարի տարւոյս թ. 297։ Եւ Մեք գայդ վկայական արժէթղթոց յանձնելով Սինօղի ս. Էջմիածնի, պատուէր տուաք—նախ բանալ զառանձին հաշիւ վասն արժէթղթոց ի գին 94600 ռուբ-

լեաց ի հաշուետուամարի Մայր Աթոռոյս և կանոնաւորապէս ստանալ գտուկոսիս գումարոյն վաճառելով զկարոնս, երկրորդ՝ պահել զգումարն որպէս դրամագլուխ անձեռնմխելի, գտուկոսիս միայն գործադրելով վասն եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց, գլխաւորապէս այնոցիկ զԷդորէից հայոց, որոց բնակիչք առաւել քայքայեալ կան տնտեսապէս ի ժամ ընդհարմանց և դժբաղդութեանց 1905 և 1906 ամաց, և երրորդ՝ ի դէպս ազգային աղէտից և թշուառութեանց, յորոց փրկեսցէ Տէր Աստուած զազգն հայոց, գտուկոսիս դրամագլխոյն գործադրել վասն արկածելոց:

Արդ՝ այսու Հայրապետական կոնգրակաւ Մերով արժանի ամենայն ջատագովութեան համարելով զմարդասէր գործունէութիւն Յանձնաժողովոյդ և յայտնելով զգոհունակութիւն Մեր, յետ այսորիկ լուծեալ համարեմք զՅանձնաժողովդ:

Օրհնեմք զանդամս կենտրոնական և տեղական մարմնոց, որպէս և զամենայն նուիրատուս և զանձնուէր վաստակաւորս և մաղթեմք ի Տեառնէ վասն ամենեցուն կեանս երջանկաւէտս և քարեքաստիկս, կար և զօրութիւն վասն ազգային և Աստուածահաճոյ գործոց յօգուտ և յերջանկութիւն ազգիս հայոց:

Ողջ լեւուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ Ամէն:

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 18 մարտի 1914 ամի.

ըստ տոմարիս ՌՅԿԳ

Ի Հայրապետութեան Մերում Գ. ամի

Արարատեան Մայր Աթոռ ս Էջմիածնի.

Ի Վաղարշապատ

Թ. 415.